

կար շրջապատի կամ շապկի քղանցքները, շապկի ծալքերը վերից վար, ուղղահայեաց: Ոտքերին թոււմ է անկրունկ, փափուկ կօշիկ: Յիսուս պատանին (ompok) նստած մօր ծնկանը, հազած ունի երկար, մինչև ոտները հասնող արեւելեան բաձկոն, ձախ ձևաքին աւետարան բռնած, աջով խաչակնքում է: Մարիամ երկու ձեռները կապած, գրկելով որդուն, որ ուշադրութեան արժանի փոփոխակ է նորա պատկերապատկեան մէջ: Պատուանդանի տակ ետատերեւ ախանթ կոթաւոր: Արձանի մեծութիւնն է 177×40 սմ.: Խոյսկաձեւ վերջաւորուած պսակի երեսը Աստուածածնի քանդակից բարձր ետատերեւ ախանթի մէջ մի սուրբի անդրի:

Աստուածածնից դէպի ձախ, նայողի համար, խոզաղուխ մի (Պատկ. 95) մարդաքանդակ է Թալինի (Պատկ. 38, 39, 40) եւ Օձունի նման, բայց ոչ չուխալաձեւ հագուստով, այլ երկար բաձկոնի վերայից փրկնաձեւ քրամիդ, կրճքին ճարմանդուած: Խոյսկի վերայ ախանթ:

Հակառակ կողմը իշխանական մի քանդակ է, գլխարաց, մաղերը կախ մինչև ախանջները, ներքնապղեստը մինչև ուրջները, վերայից կափնջիի նման վերնապղեստը մի քիչ կարճ. բացուածքից՝ աջ ձեռքը հանել է եւ վեր բարձրացրել, ափը դէպի նայողը, որ ողջունի եւ հաւատամքի նշան էր: Ուրջների մօտ անդրափարտիկը կօշիկների ճիտկերի մէջ անցրած, կրունկներն իրար մօտ եւ ծալքերը հակառակ ուղղութեամբ: Ներքեւում դարձեալ ետատերեւ ախանթ կոթով: Խոյսկի վերայ ախանթ եւ հրեշտակի անդրի (Պատկ. 91): Այս քանդակը իշխանական կոչւեցինք, հագուստի կողմից նման տեսնելով Թալինի (Պատկ. 66) քանդակներին:

Չորրորդ երեսը. ներքեւում դարձեալ նոյն կոթաւոր ախանթը, եւ վերան կանգնած մի Ֆիզուր, ներքնապղեստը մինչև ոտները, վերնապղեստը փրկնաձեւ, աւելի կարճ, ծնկներից քիչ ցած հասած: Ներքնապղեստի վերայից հագուստը հորիզոնական ծալքերով, մինչ դեռ ներքնապղեստինը ուղղահայեաց, ինչպէս տեսանք Օձունի, Թալինի քանդակների վերայ, որ եկեղեցականների կամ առաքեալների պատկերներ էին: Գլխի շուրջը լուսոյ պսակ ունի եւ մաղերը սանտրուած

են վերից վար՝ թեւ թեւ, ինչպէս Պողոսովանքում: Աջ կողմից պատուանդանի մէջ հաստատուած է մի սիւն կամ ձող, վերեւում քառանկիւնի վերջաւորութեամբ, ձախատին խաչի վերեւի թեւը, արդեօ՞ք Labarum, որ նշանակութիւն կ'ունենար եւ ծագման ժամանակի նկատմամբ: Պսակի վերայ այստեղ եւս նոյն ախանթը, իսկ աւելի բարձր, ելնդաւոր ձուածեւների դարնէյ, կոտրած, հելլենական մի մոտիւ:

ԺԱ.

Թալինից դէպի հիւսիս, աւելի բարձր, Արագածի դագաթի ուղղութեամբ, Աբրիաման գիւղն է, տարաբաղդարար հնագոյն անունն անյայտ, բայց մէկը այս շրջանի ամենահին գիւղերից, հաւանօրէն, կամսարականների սեպականութիւն, հեռու չլինելով Թալինից: Այս հաստուածի Ա. Գլխի մէջ եր. 51 գերեզմանական կոթողների տեղադրութեան մէջ տուել ենք հարկաւորը տեղի հնութեան եւ արժէքի մասին, յայտնելով թէ այնտեղ բացի Հոփոսիմէի տիպի հին տաճարից, որ գիւղի եկեղեցին է այժմ, գիւղից դուրս ձորի մէջ կայ եւ մի հին բաղրիլիկ եկեղեցու մնացորդ, խոյսկի ձեւն ու քանդակները միանգամայն նման Տիկորի կամ Քասախի Ե. դարի եկեղեցիներին, բայց եւ մի լուսամտուի մնացորդ, որ իւր կողքերի եւ պսակի դարդերով, մեր ճարտարապետութեան ամենահին շրջանն է տանում, մատնանշելով եւ դեղարուեստական հոսանքի մօտաւոր հայրենիքը (Պատկ. 96): Նման մի քանդակ կայ Ամմանում, որի նկարները տալիս է Strzygowski-ն՝ Հայաստանին նուիրած իւր մեծ գործի մէջ, օգտագործելով այն որպէս արագոյց իրանական հոսանքի ազդեցութեան եւ կոյր կամարների ծագման տեղի: * Տարաբաղդարար Ստրչիգովսկու գործի հրատարակութիւնից յետոյ մենք չենք եղել կրկին այդտեղ, ուստի եւ աւելի մանրամասնութիւններ չենք կարող տալ, որ կարեւորագոյն արժէք կ'ունենար, դուցէ, արուեստի պատմութեան համար՝ աւելի հաստատուն եղրակացութեան դալու: Յամենայն դէպս մեր խնդրի համար իւր մեծ արժէքն

*Die Baukunst der Armenier und Europa. 1918. Wien S. 448 եւ շար. Altai-Iran, S.